

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019-2023 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ.

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱՑԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՏԵՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.3-61

Մեզնից յուրաքանչյուրն իր գործերի զավակն է:
Սերվանտես

Հիմնաբառեր. Երևանի քաղաքապետարան, տեղական ինքնակառավարում, զարգացման հնգամյա ծրագիր, քաղաքաշինություն, քաղաքային բյուջե, ռազմավարություն, մարտավարություն

Երևանի զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագրի երեք և կես տարին դարձել է պատմություն: Ինքնին հասկանալի է, որ ընդհանուր ժամանակահատվածի «առյուծի բաժինն» արդեն անցել է, և փաստացի արդյունքների հիման վրա, ըստ ծրագրային ոլորտների՝ կարելի է կատարել համապատասխան կատարողականի աստիճանի իրավիճակային վերլուծություն: Դրանում կարևոր բաղադրիչ է Երևանի զարգացման 2022 թվականի տարեկան ծրագրով նախանշված և քաղաքային բյուջեում ամրագրված՝ իրականացվելիք աշխատանքների ծավալը՝ հաշվի առնելով այն օբյեկտիվ իրողությունը, որ 2022-ը հնգամյա ծրագրի վերջին ամբողջական տարին է, իսկ 2023-ի աշնանը սպասվում են Երևանի ավագանու հերթական ընտրություններ: Այդ գործընթացը սկսվելու է արդեն իսկ այս տարվա միջնամասում, որը դանդաղորեն, բայց դառնալու է մայրաքաղաքի տնտեսական կյանքի վրա ներազդող քաղաքական գործոն՝ իր դրական ու բացասական բոլոր միտումներով հանդերձ: Երևանի զարգացման հնգամյա ծրագրով ըստ ոլորտների նախատեսված աշխատանքները, որպես կանոն, ունեն իրենց, այսպես ասած, կարևորագույն «մեխերը», որոնցից յուրաքանչյուրի հաջող իրականացումը տվյալ պահին իշխանություն ստանձնած քաղաքական թիմի «երեսը պարզ անելու» լավագույն միջոցն է, ինչպես նաև հաջորդ ընտրություններում կրկին քաղաքական հայտ ներկայացնելու հիմնական նախադրյալը: Ելնելով նշվածից, ինչպես նաև հաշվի առնելով համավարակի և 44-օրյա պատերազմի գործոնները՝ հողվածում, բացառապես ըստ բաց աղբյուրների տեղեկությունների և հաշվետվությունների, փորձ է արվել



Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու

1989 թ. ավարտել է ԵՐԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանավտեսագիտական ֆակուլտետը: Սկսած 1993 թ., շուրջ 25 տարի աշխատել է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004 թվականից դասավանդում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական փարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում: 2019 թվականից ՀՊՏՀ «Ամբեր» հեղափոխական կենտրոնի հեղափոխող է:

Երկու տասնյակից ավել գիտական, վերլուծական հոդվածների և 2 մենագրության հեղինակ է:

 ORCID - <https://orcid.org/0000-0001-9014-5892>

վերլուծելու հաշվետու հնգամյա ժամանակահատվածի եռամյա կադրողականի արդյունքները և վերջին երկու տարվա անելիքների համապետություն պարզելու, թե քաղաքաշինության ու ճարտարապետության ոլորտում որ կարևորագույն ծրագրերն են կյանքի կոչվել ամբողջապես, որոնք են ընթացքում և որոնք թղթի վրա՝ այդպես էլ չդառնալով իրականություն:

Քաղաքաշինական ծրագրեր և ճարտարապետություն

Անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ Երևանի զարգացման 2019-2023 թթ. հնգամյա ծրագրի¹ հիմքում նախորդ քաղաքական թիմի՝ 2018-2022 թվականների համար մշակված և նախանշված Երևան քաղաքի զարգացման հնգամյա ծրագրի² հիմնական դրույթներն են, որոնք տեսակարար կշռով ներկայիս ծրագրի շուրջ 85%-ն են: Այսինքն՝ իշխանության ղեկը ստանձնած այսօրվա թիմն ընդունել է քաղաքաշինական ոլորտի համար նախկինում մշակված ծրագրերի իրատեսականությունն ու իրացվելիության հնարավորությունն ինչպես ծավալների, այնպես էլ կատարման ժամանակահատվածի ու կարևորության առումով: Նման քաղաքականությունը, իհարկե, ողջունելի է, քանի որ, պահպանելով նախկինում (թեկուզև այլ քաղաքական թիմի կողմից) արդեն իսկ նախանշված՝ մայրաքաղաքի համար կարևորագույն նշանակություն ունեցող ճարտարապետական ու քաղաքաշինական ծրագրերի շարունակականությունը, այսօրվա թիմն իր գործողությունների հիմքում դրել է մայրաքաղաքի համաչափ զարգացման հիմնարար սկզբունքը, որը տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ սահմանված նորմ է³:

Երևանի զարգացման ներկայիս հընգամյա ծրագրում հանգամանալից կերպով ներկայացվել են քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտի հիմնախնդիրները⁴, որոշ դեպքերում հասցեական, իսկ մի շարք դեպքերում վերացական (անհասցե) կերպով թվարկելով այն աշխատանքներն ու ծրագրերը, որոնց իրականացման համար ընտրվել է հենց այս հնգամյա ժամանակահատվածը: Աղյուսակ 1-ում արտացոլված են այն կարևորագույն ու հիմնական ծրագրերը, որոնց կատարումը միտված է մայրաքաղաքի բնակչության և ժամանած հյուրերի առօրյան առավել անվտանգ ու մարդակենտրոն դարձնելուն:

Աղյուսակ 1-ից ակնհայտ է, որ հնգամյա ծրագրով ամրագրված 19 ծրագրերի կատարողականը չափազանց ցածր մակարդակում է: Կարելի է ասել, այն էլ՝ վերապահումով, որ իրագործվել է ընդհանուր աշխատանքի 1/3-ը միայն, քանի որ ուսումնասիրվող ժամանակահատվածում 6 ծրագիր է ընթացքում: Ընդ որում, մինչև 2023 թվականը կարող է ամբողջապես ավարտվել միայն դրանցից մեկը: Ինչ վերաբերում է դեռևս նույնիսկ չմեկնարկած 13 ծրագրերին, որոնք անգամ «սաղմնային» վիճակում չեն, կարելի է եզրակացնել, որ դրանք այդպես էլ մնալու են թղթի վրա: Որևէ հասցեական ու տեսանելի տեղաշարժ առկա չէ նաև բնակարանաշինության ոլորտի այնպիսի կարևոր շարունակական ծրագրի պարագայում, ինչպիսին է 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար իրականացվող վերաբնակեցման գործընթացը, որտեղ, ավանդաբար, օգտագործվում են համայնքմասնավոր հատված համագործակցության հնարավորությունները: Այս ծրագրի նպատակն է ապահովել 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգությունը՝ միաժամանակ նպաստելով համայնք-մասնավոր հատված համագործակցության զարգացմանը: Քաղաքաշինական ոլորտի պատկերը, ինչ խոսք, ոգևորիչ չէ: Պետք է գիտակցել, որ խոսքը Հայաստանի մայրաքաղաքի քաղաքաշինական ու ճարտարապետական կայուն ու համաչափ զարգացման սկզբունքի կիրառման մասին է, որը ենթադրում է արդյունավետ ու նպատակային կապիտալ

¹ <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/96/47e1986386f7c83ef76ba01ff53f3411cfa11b44.pdf>
² <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/77/b811f8942b6bcdcf75ed25803c16df400c9dceb7.pdf>
³ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 3:
⁴ <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/96/47e1986386f7c83ef76ba01ff53f3411cfa11b44.pdf>

2019-2023 թթ.-ի համար նախատեսված քաղաքաշինական աշխատանքների ընթացքը

Կ/Ի	Աշխատանքի անվանումը	Ունեցողը	Ծանոթություն
1	Քաղաքի զարգացման ռազմավարության (City Development Strategy) մշակում:	Տեսանելի աշխատանքներ չեն կատարվել:	Ռազմավարության մշակման ընթացքի կամ հանրային լուսնների կամ քննարկումների մասին Երևան քաղաքի պաշտոնական 'Yerevan.am, կայքում որևէ տեղեկություն առկա չէ:
2	Մայրաքաղաքի հյուսիսային և հարավային մուտքերն իրար միացնող շրջանցիկ նոր ճանապարհ:	Ընթացքում է:	Ներկայում աշխատանքները վերջին փուլում են: 2022 թ. հունիսին շահագործման հանձնվեց Շիրակի փողոցն Արգավանդի խճուղուն կապող կամուրջը: Դեռևս խնդրահարույց է Շիրակի փողոցի որոշ հատված, իսկ ծրագրի ամբողջական ավարտը նախատեսվում է 2023 թ.-ին:
3	Երթևեկության բեռնաթափման նպատակով վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում:	Աշխատանքներ չեն կատարվել:	Հասցեականություն առկա չէ: Մինչ օրս նմանատիպ որևէ կառույց չի շահագործվել, և այս պահին Երևանում նմանատիպ կառույցի համար նախատեսված որևէ շինարարական հրապարակ առկա չէ:
4	Գործող ստորգետնյա անցումների բարեկարգում և դրանց անվտանգ օգտագործման ապահովում:	Քաղաքային ծրագրերով ամբողջական բարեկարգման տեսանելի աշխատանքներ չեն կատարվել:	Կրկին հասցեականություն առկա չէ, սակայն կարելի է ենթադրել, որ խնդիրը հիմնականում վերաբերում է Մաշտոցի պողոտայի երեք և Կոմիտասի պողոտայի մեկ գետնանցմանը: Դրանցից երկուսը («Փակ շուկա» և «Ձկան խանութ») մինչ օրս մայրաքաղաքին ոչ վայել՝ անմխիթար, հակասանիտարական և կիսաքանդ վիճակում են, իսկ մեկի (Միսաք Մանուշյան պուրակի մոտ) բարեկարգման աշխատանքները սկսվել էին դեռևս 2015 թ.-ին՝ Երևանի քաղաքապետարան-մասնավոր հատված համագործակցության շրջանակում՝ «Տաշիր գրուպ» ընկերության կողմից, ինչն արդեն ավարտուն տեսքի է բերվել: Չափազանց անբարեկարգ և անհրապույր է նաև Կոմիտասի պողոտայի գետնանցումը (Զուկայի մոտ):
5	Արշակունյաց պող. և Գ. Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ, ճանապարհային հանգույցի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակում, շինարարական աշխատանքների համար ներդրումների ներգրավման գործընթացի իրականացում:	Ներկա պահին որևէ տեսանելի շինարարական աշխատանք չի կատարվել:	Արշակունյաց պող. և Գ.Նժդեհի փողոցի հատման մասը կարգավորող հանգույցի նախագծի քննարկումները սկսվել էին դեռևս 2017 թ.-ին, ապա վերսկսվել 2019-ին: Ներկայում ծրագրի կամ նախագծերի հրապարակային որևէ քննարկման վերաբերյալ Երևանի պաշտոնական կայքում կամ այլ լրատվամիջոցներում տեղեկություն առկա չէ:
6	Արշակունյաց պող., Ազաթանգեղոսի և Գր. Լուսավորչի փողոցների հատման հանգույց՝ «Կրկեսի» խաչմերուկ ճանապարհային հանգույցի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակում, շինարարական աշխատանքների համար ներդրումների ներգրավման գործընթացի իրականացում:	Աշխատանքներ չեն կատարվել:	Այս ծրագրի շուրջ նույնպես քննարկումները սկսվել են 2017 թ.-ին, սակայն ներկայում տվյալ հատվածին վերաբերող աշխատանքների որևէ փուլի մասին հրապարակային տեղեկություն առկա չէ:
7	Արշակունյաց պող., Բագրատունյաց պող., Աշխատանքի հրապարակ ճանապարհային հանգույցի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակում, շինարարական աշխատանքների համար ներդրումների ներգրավման գործընթացի իրականացում:	Աշխատանքներ չեն կատարվել:	Աշխատանքային որևէ փուլի մասին հրապարակային տեղեկություն առկա չէ:
8	Համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծում:	Ներկայում դադարի վիճակում է:	3 տարվա ընթացքում տվյալ տարածքում որևէ շենք շահագործման չի հանձնվել: Քաղաքի կենտրոնում՝ Բուզանդի և Արամի փողոցների միջնամասում, առկա են տասնյակ մետր խորությամբ փորված հիմքեր, որոնք արդեն ծածկվել են բուսականությամբ և ոչ միայն գեղագիտական առումով են անընդունելի, այլև բնակչության և զբոսաշրջիկների համար պարունակում են ռիսկի քաղաքի:
9	Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում:	Դեռևս մեկնակետում է:	Ծրագրի հաստատումից միայն երկու տարի անց՝ 2021 թ. օգոստոսին, տրվել է Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի մեկնարկը:

10	Ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում Շահումյանի և Սախարովի հրապարակներում:	Աշխատանքներ չեն կատարվել:	Աշխատանքները չեն սկսվել, և մինչ օրս որևէ հայտարարություն չի արվել դրանք սկսելու կամ դրանց վերաբերող նախագծերի առկայության մասին:
11	Տիջինա թաղամասի համալիր կառուցապատում՝ նախատեսված Երևանի գլխավոր հատակագծով:	Ընթացքում է:	Մասնակի մեկնարկել է կառուցապատումը:
12	Կոնդ թաղամասի համալիր կառուցապատում՝ նախատեսված Երևանի գլխավոր հատակագծով:	Աշխատանքներ չեն կատարվել:	Աշխատանքային որևէ փուլի մասին հրապարակային տեղեկություն առկա չէ:
13	Սարի թաղ թաղամասի համալիր կառուցապատում՝ նախատեսված Երևանի գլխավոր հատակագծով:	Աշխատանքներ չեն կատարվել:	Աշխատանքային որևէ փուլի մասին հրապարակային տեղեկություն առկա չէ:
14	Զվարթնոց՝ օդանավակայան տանող նոր ավտոմայրուղու կառուցում:	Աշխատանքներ չեն կատարվել:	Աշխատանքները չեն սկսվել և մինչ օրս որևէ հայտարարություն չի արվել դրանց մեկնարկի կամ որևէ նախագծի առկայության մասին:
15	Կոմիտասի պողոտային զուգահեռ՝ այլընտրանքային ճանապարհի կառուցում:	Ընթացքում է:	Երևանի բաղաբազմի 2022 թ. բյուջետային ուղերձում նշված է, որ նախատեսվում է կառուցել Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող նոր ճանապարհահատված: Սակայն, տարածքում մինչ այս պահը դեռևս առկա է իրացման խնդիր:
16	«Հաղթանակ» զբոսայգում, միջազգային չափանիշներին համապատասխան, հանգստի գոտու և զվարճանքի կենտրոնի ստեղծում (27 հա):	Աշխատանքներ չեն կատարվել:	Նշված ծրագրի վերաբերյալ որևէ հայտարարություն արված չէ, և առկա չէ նախագիծ, որը նաև պետք է անցնի հանրային քննարկման ու լուծման փուլ:
17	Հրազդանի կիրճի բարեկարգման համալիր ծրագրի մշակում՝ մարզական և մարմնակրթական բաղադրիչներով արկածային-զբոսաշրջային կենտրոնի ստեղծմամբ:	Աշխատանքներ չեն կատարվել:	Ընդամենը հայտարարվել է նշված ծրագրի մշակման և իրականացման անհրաժեշտության մասին:
18	Միջազգային չափանիշներին համապատասխան՝ Երևանի կենդանաբանական այգու վերակառուցման ավարտ:	Ընթացքում է:	Աշխատանքները սկսվել են դեռևս նախորդ հնգամյա ծրագրի շրջանում: Նախատեսվել է, ըստ փուլերի, կատարել վերակառուցում, որը դեռևս ավարտման փուլին չի հասել:
19	Երևանում նոր ճոպանուղային ցանցի կառուցում:	Աշխատանքներ չեն կատարվել:	Ծրագիրը հայտարարության փուլից այն կողմ չի անցել, և դրա իրականացման որևէ նախադրյալ չկա:

ծախսերի կատարում: Կատարողականի այսպիսի «խղճուկ» պատկերը հնգամյակի երեք և կես տարում ուղղակի թույլ չի տալիս լինել լավատես՝ ակնկալվող վերջնարդյունքի առումով:

Միջնարդյունք

Նման իրավիճակն ամեննին էլ չի վկայում ներկա քաղաքային իշխանության կազմակերպչական ու կառավարչական հմտությունների մասին, և հենց այդ նույն կառավարիչները, եթե իրականացնեն սթափ, մանրակրկիտ և օբյեկտիվ վերլուծություն՝ թերացումների «փաթեթի» առումով, իրենց աշխատանքը պետք է որ գնահատեն անբավարար: Միայնվել ու թերանալ այսպիսի կարևոր ոլորտում՝ նշանակում է վտանգի ենթարկել Երևանի կայուն ու համաչափ զարգացումն ընդհանրապես: Հասկանալի է, որ նման իրավիճակի ստեղծման մեջ իրենց մասնաբաժինն ունեն համավարակի ու 44-օրյա պատերազմի գործոնները, որոնց մասին

հաճախ են շեշտում ոլորտի պատասխանատուները, սակայն այս դեպքում էլ պետք է լինել արդարամիտ ու նշել, որ նմանատիպ ծրագրերը, լինելով փուլային, թույլ են տալիս, որ դրանց «կյանքի կոչման» ճանապարհի սկզբնական ժամանակատար մասը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, հանրային քննարկում, նախագծի և ապա շինարարական աշխատանքների գնման գործընթաց, անցնել անգամ ծանր ֆորս մաժորների ժամանակահատվածում: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ, ոլորտի հիմնախնդիրների մասնակի լուծման առումով, անվերադարձ բաց է թողնվել շատ թանկարժեք ժամանակ: Միաժամանակ, պետք է արձանագրել, որ Երևանի քաղաքապետի 2022 թվականի ուղերձը⁵ չունի տարին բեկումնային դարձնելու հավակնոտություն ու ձգտում: Այսինքն՝ աղյուսակ 1-ում ամփոփված չիրականացված ծրագրերը «կյանքի կոչելու» վերաբերյալ վերոնշյալ

⁵ <https://www.yerevan.am/uploads/media/default/0002/03/82e5011e1af9a07354c627ceb7fcaa0ebcf5ff10.pdf>

փաստաթղթում որևէ նշում չի կատարվում:

Ավելին, Երևան քաղաքի 2022 թ. բյուջեի ծախսերում 2021 թ. համեմատ նախատեսված են կրճատումներ, որոնք վերաբերում են նաև կապիտալ ծախսերին: Սա արդեն անբացատրելի երևույթ է, քանի որ Երևան քաղաքի զարգացման հնգամյա ծրագրի քաղաքաշինական ոլորտի աշխատանքներն իրենց բնույթով կապիտալ ծախսեր են, և տարին, հնգամյա ծրագրի տրամաբանության տեսանկյունից, պետք է լիներ որոշիչ: Ընդ որում, հատկապես մտահոգիչ է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կրճատումը, որը ենթադրում է քաղաքային ենթակառուցվածքների արդիականացման և նորերի կառուցման համար նախատեսվող ծախսերի նվազեցում, ինչը չի կարող իր բացասական ազդեցությունը չունենալ մայրաքաղաքի կայուն զարգացման գործընթացի վրա: Սակայն, պլանավորված թվերի նվազեցումը, նախատեսված աշխատանքների ոչ ամբողջական կատարման առումով, «ստուգաբեկորի» միայն երևացող մասն է: Կարևոր ցուցիչը քաղաքաշինական ոլորտի տարեկան ծախսերի արդյունավետության աստիճանն է:

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2019-2022 թթ. ոչ ֆինանսական ակտիվների գծով տարեկան պլանավորված ծախսերը և փաստացի կատարողականը՝ ճշտված ծախսերը⁶: Ընդ որում, այս ցուցանիշները նույնպես «սփոփիչ» չեն:

Ակներև է, որ 2019-2020 թթ. քաղաքային ենթակառուցվածքների արդիականացման և նորերի կառուցման փաստացի աշխատանքները թերակատարվել են շուրջ 2/3-ի չափով, ինչը որևէ հիմնավորում և արդարացում չի կարող ունենալ: Ընդհանուր տարեկան կատարողականի առումով, թերևս, բացառություն է 2021 թվականը, երբ մեծ է «մեքենա-սարքավորումներ» հոդվածի ծախսը, որն էլ, սակայն, առնչվում է Երևան ներկրված ավտոբուսներին, և 2022 թվականի ծախսերի նվազման միտումը պայմանավորված է նաև այդ հանգամանքով⁷: «Շենք-շինություններ» հոդվածի առումով, 2021 թվականի 68.2% կատարողականը, քաղաքաշինական նոր ծրագրերի համատեքստում, չի կարող համարվել դրական արդյունք, չնայած որ դա նախորդ տարվա անբացատրելի ցածր ցուցանիշի (35.8%) կրկնապատիկն է, քանի որ, համաձայն հաշ-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

**Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2019-2022 թթ.⁷
(տնտեսագիտական դասակարգում)**

Տարի	Ծախսի հոդվածը (գնելու ենթագիտական դասակարգմամբ)	Տարեկան ճշտված պլանը	Փաստացի	Կատարողականի %
2019	Ընդամենը՝	15,640,691.9	7,448,689.3	47.6
	որից՝			
	շենք. շինութ.	9,209,666.2	3,769,512.0	40.9
	մեքենա. սարք.	6,034,437.9	3,111,500.0	51.6
2020	Ընդամենը՝	22,740,976.8	9,117,810.3	40.1
	որից՝			
	շենք. շինութ.	11,323,614.4	4,050,649.8	35.8
	մեքենա. սարք.	10,974,082.3	4,909,176.2	44.7
2021	Ընդամենը՝	29,645,365.8	23,531,582.4	79.4
	որից՝			
	շենք. շինութ.	12,148,885.5	8,287,504.1	68.2
	մեքենա. սարք.	17,044,063.3	15,063,531.9	88.4
2022	Ընդամենը՝	15,712,426.7	-	-
	որից՝			
	շենք. շինութ.	12,240,032.0	-	-
	մեքենա. սարք.	3,082,642.7	-	-

⁶ <https://www.yerevan.am/am/finance/>
⁷ Ներկայացված ցուցանիշներն արտացոլված են Երևանի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ 2019-2021 թթ. հաշվետվություններում և Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեում:
⁸ Աղյուսակում 2-ում շենք-շինությունների և մեքենասարքավորումների հանրագումարը չի կարող հավասար լինել ընդհանուր տարեկան ցուցանիշին, քանի որ, բացի վերոնշյալ հոդվածներից, առկա են նաև այլ հոդվածներ (նախագծահետազոտական ծախսեր, պաշարներ և այլն):

վետվության, տվյալ հողվածով իրականացված շուրջ 8.3 մլրդ դրամ ծախսերի 85%-ը (7.2 մլրդ դրամ) ուղղվել է կապիտալ վերանորոգման աշխատանքներին⁹:

Թերակատարման այս ցուցանիշները վկայում են, որ տվյալ ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար քաղաքաշինության ոլորտում անկատար է մնացել նախատեսված աշխատանքի կեսից շատ ավելին, որն անարդյունավետ կառավարման ակնառու ցուցիչ է:

Ելնելով «իրերի այսպիսի դասավորությունից»՝ կարելի է արձանագրել, որ քաղաքաշինական ծրագրերի հնգամյա վերջնարդյունքի պարագայում կատարածի և չկատարածի կշռային հարաբերակցությունը չի կարող կրել տեսանելի փոփոխություն, իսկ մայրաքաղաքի համար մի շարք անհրաժեշտ ու կարևորագույն ծրագրերի ճակատագիրը դեռևս անորոշ է: Ընդգծենք նաև, որ նշված ծրագրերից մի քանիսը համայնք-մասնավոր հատված համագործակցության տրամաբանության մեջ են, սակայն դրանց հիմնական մասը, հաշվի առնելով դրանց ֆինանսական ծավալները, հնարավոր էր իրականացնել նույնիսկ սեփական եկամտի աղբյուրով՝ առանց վարկային միջոցների ներգրավման ու համաֆինանսավորման: Սրանք իրատեսական և իրագործելի ծրագրեր են, որոնք էականորեն հարմարավետ ու անվտանգ են դարձնելու Երևանը՝ ոչ միայն բնակիչների, այլև մայրաքաղաք ժամանող հյուրերի համար: Այդ ծրագրերի որոշիչ մասն ունի Երևանի տրանսպորտային գերբեռնված վիճակը թեթևացնելու առաքելություն, և, իհարկե, այդ աշխատանքների փաստացի կատարողականի այսպիսի պատկերը չի կարող չմտահոգել երևանցիներին: Դա նաև պետք է մտահոգի քաղաքի ղեկը ստանձնած այսօրվա կառավարիչներին, քանի որ ցուցանիշների համեմատականը վկայում է կարևորագույն ոլորտում խոստումների գերակշիռ մասը թերակատարելու և չիրականացնելու մասին:

Այս ամենին պետք է հավելենք, որ արդեն սկսվել է Երևանի ավագանու հաջորդ ընտրությունների նախապատրաստական փուլը, որի ժամանակ, օբյեկտիվորեն, կրկին քաղաքական բաղադրիչը «շղարշելու» է տնտեսականը: Քաղաքական խաղի կանոններին համապատասխան՝ կրկին հայտնվելու են ընտրությունից ընտրություն Երևան քաղաքի հոգսերով տառապողները՝ իրենց «բենդերյան» «Նյու Վասյուկի»¹⁰ ծրագրերով՝ անիրատեսական խոստումների ու մանիպուլացիոն հնարքների «գույնզգույն փաթեթներով», որոնցից որոշները վերաբերելու են նաև ինչինչ պատճառներով չիրականացված ներկայիս ծրագրերին՝ շեշտելով դրանց գերակայությունը, կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Հասկանալի է, որ Երևանի ավագանու ընտրությունները, որոշակի պարբերականությամբ, առաջին հարթակ դուրս գալու «բնավորություն» ունեն, և դա մեր մայրաքաղաքային կյանքի անբաժանելի մասն է: Սակայն, որևէ քաղաքական գործընթաց չպետք է խաթարի Երևանի կայուն ու համաչափ զարգացման գործընթացը, և, իհարկե, ամեն ինչ պետք է արվի հանուն այդ կարևոր սկզբունքի անխափան կենսագործման: Ու այս դեպքում նույնպես թող հաղթեն ողջամտությունը, իրատեսությունն ու անշահախնդիր սերը Երևանի հանդեպ:

Երևանը, ինչպես երբևէ, կարիք ունի հմուտ, ողջախոհ և բանիմաց կառավարիչների, որոնց անկաշառ, նպատակային ու համակարգված գործունեությունը լավագույն ապացույցը կլինի մայրաքաղաքի հանդեպ նրանց նվիրումի, սիրո ու հարգանքի:

Այլ ճանապարհ չկա:

⁹ <https://www.yerevan.am/uploads/media/default/0002/05/1e6a0da276d72cd86842343c337c93ccd8b29503.pdf>

¹⁰ Օստապ Բենդերի՝ Իլյա Իլֆի և Եվգենի Պետրովի «Ոսկե հորթը» վեպի հերոսի ծաղրական մտավորականներից մեկը Վասյուկի քաղաքի անհավանական զարգացման մասին էր, որով էլ նա մոլորեցնում էր տվյալ քաղաքի հանրությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 3,
2. <https://www.yerevan.am/am/finance/>
3. <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/96/47e1986386f7c83ef76ba01ff53f3411cfa11b44.pdf>
4. <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/77/b811f8942b6bcdcf75ed25803c16df400c9dceb7.pdf>
5. <https://www.yerevan.am/uploads/media/default/0002/03/82e5011e1af9a07354c627ceb7fcaa0ebcf5ff10.pdf>
6. <https://www.yerevan.am/uploads/media/default/0002/05/1e6a0da276d72cd86842343c337c93ccd8b29503.pdf>

Ամասը ԳԱԼՏՅԱՆ

*Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,
кандидат экономических наук*

ГОРОДСКАЯ ЭКОНОМИКА

ПЯТИЛЕТНЯЯ ПРОГРАММА РАЗВИТИЯ ЕРЕВАНА НА 2019-2023 ГГ.: ГРУСТНАЯ КАРТИНА ГРАДОСТРОИТЕЛЬНЫХ ПРОГРАММНЫХ ОБЕЩАНИЙ И РЕАЛЬНЫХ РЕЗУЛЬТАТОВ

Первые три с половиной года пятилетней программы развития Еревана (2019-2023 годы) уже стали историей. Понятно, что «львиная доля» общего срока этой программы уже пройдена и по фактическим результатам можно сделать ситуационный анализ уровня их выполнения.

Важным компонентом этого анализа может быть объем работ, предусмотренный в бюджете города Еревана на 2022 год, принимая во внимание тот объективный факт, что 2022 год является последним полным годом пятилетней программы, так как в следующем году состоятся выборы в Совет старейшин Еревана. Хотя выборы состоятся следующей осенью, но по понятным причинам этот процесс начнется уже в середине текущего года, который медленно, но верно станет политическим фактором, влияющим на экономическую жизнь столицы, со всеми ее положительными и отрицательными тенденциями. Работы, предусмотренные пятилетней программой развития Еревана, как правило, имеют свои так называемые существенные «гвозди», успешная реализация каждого из которых является наилучшим способом создания положительной репутации политической команды, находящейся у власти, а также основное условие повторной подачи политической заявки на следующих выборах.

На основании изложенного, а также принимая во внимание факторы 44-дневной войны и COVID-19, влияющие на эффективную реализацию процесса, изучая информационное поле исключительно открытых источников, была предпринята попытка зафиксировать итоги трехлетнего выполнения и в разрезе того, что необходимо сделать, выяснить, какие крупные проекты в области градостроительства и архитектуры реализованы полностью, какие находятся на этапе реализации и какие остались на бумаге и уже не станут реальностью на этом пятилетнем этапе развития.

Ключевые слова: мэрия Еревана, местное самоуправление, пятилетняя программа развития, градостроение, городской бюджет, стратегия, тактика

Hamazasp GALSTYAN
Researcher at "Amberd" Research Center, ASUE,
PhD in Economics

URBAN ECONOMY

YEREVAN DEVELOPMENT 2019-2023 FIVE-YEAR PROGRAM: SAD PICTURE OF URBAN PLANNING PROMISES AND ACTUAL RESULT

The first three and a half years of Yerevan's five-year development program (2019-2023) have already become history. It is clear that the "lion's share" of the total period of this program has already been passed, and based on the actual results, it is possible to make a situational analysis of the level of their implementation.

An important component of this analysis can be the scope of work envisaged in the budget of the city of Yerevan for 2022, taking into account the objective fact that 2022 is the last full year of the five-year program, since elections to the Council of Elders of Yerevan will take place next year. Although the elections will be held next fall, for obvious reasons this process will begin already in the middle of this year, which will slowly but surely become a political factor influencing the economic life of the capital, with all its positive and negative trends. The works envisaged by the five-year development program of Yerevan, as a rule, have their so-called significant "nails", the successful implementation of each of which is the best way to create a positive reputation for the political team in power, as well as the main condition for re-submitting a political application in the next elections.

Based on the foregoing, and also taking into account the factors of the 44-day war and COVID-19 that affect the effective implementation of the process, studying the information field of exclusively open sources, an attempt is made to fix the results of a three-year implementation and in the context of what is needed to do, to find out which major projects in the field of urban planning and architecture have been fully implemented, which are in the implementation stage and which have remained on paper and will no longer become a reality at this five-year stage of development.

Key words: *Yerevan Municipality, local self-government, five-year development program, urban development, city budget, strategy, tactics*